

Հարցաշար
«Հայոց Եկեղեցու պատմություն» առարկայի մարզային փուլ
10-րդ դասարան - 120 րոպե

№ 1-8

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

1. Քանի՞ գիրք են պարունակում Հին և Նոր Կտակարանները միասին:
(0,5 միավոր)
1) 72 2) 75 3) 84 4) 101

2. Ո՞ր թեմի տարածքում է գտնվում Սևանավանքը:
(0,5 միավոր)
1) Սյունյաց 2) Գուգարքի 3) Տավուշի 4) Գեղարքունիքի

3. Ս. Մեսրոպ Մաշտոցի և իր աշակերտների կողմից հայերեն թարգմանված առաջին նախադասությունն Աստվածաշնչի ո՞ր գրքից էր:
(0,5 միավոր)
1) Առակաց 2) Ծննդոց 3) Սաղմոսաց 4) Գործք առաքելոց

4. Հայոց ո՞ր կաթողիկոսի հորդորանքով է հրատարակվել հայկական առաջին պարբերական «Ազդարար»-ը:
(0,5 միավոր)
1) Սիմեոն Ա. Երևանցի 2) Ղուկաս Ա. Կարնեցի
3) Ներսես Ե. Աշտարակեցի 4) Գևորգ Դ. Կոստանդնուպոլսեցի

5. Ո՞ր թվականից է հրատարակվում «Էջմիածին» ամսագիրը:
(0,5 միավոր)
1) 1868 թ. 2) 1918 թ. 3) 1944 թ. 4) 1955 թ.

6. Ո՞ր աշխատությունից են ստորև մեջբերված խոսքերը. «Եկեք ոտքի՛ ելնենք, զգաստանանք ու փրկագործենք բերկրալի Արարատյան դրախտը եղեմակերտ»:
(0,5 միավոր)
1) «Նոր տետրակ, որ կոչվում է հորդորակ»
2) «Որոգայթ փառաց»
3) «Սուրբ Կաթողիկեի ողբը»
4) «Ծրագիր կազմակերպական կանոնագրի Օսմանյան Հայաստանի»

7. Ե՞րբ է գրվել մեզ հասած հայերեն հնագույն ամբողջական Ավետարանը՝ «Վեհամոր Ավետարան»-ը:
(0,5 միավոր)
1) VII դ. 2) IX դ. 3) XI դ. 4) XIII դ.

8. Ո՞ր ժողովում է դատապարտվել Եվտիքեսի ուսմունքը:
(0,5 միավոր)
1) Նիկիայի 2) Կ.Պոլսի 3) Եփեսոսի 4) Զաղկեդոնի

№ 9-12

Կառուցված պատասխանով առաջադրանքներ

9. Հայոց կաթողիկոս Ներսես Գ. Տայեցին ու՛մ ուղեկցությամբ և մեծաթիվ բազմությամբ գնաց Վարազա լեռ, և մեծ տոնախմբություն կազմակերպեցին:
(1 միավոր)

10. Ի՞նչ անունով է հայտնի Ոսկյանք վկաների քարոզների շնորհիվ քրիստոնեությունն ընդունած հայ ազնվականների խումբը: (1 միավոր)

11. Ո՞ր թվականին է Աղեքսանդր Ա. Ջուղայեցի կաթողիկոսին հաջողվել Պարսից Հուսեին շահից ստանալ հատուկ հրովարտակ, որի համաձայն՝ արգելվում էր կաթոլիկ նոր միաբանությունների ստեղծումը Պարսկաստանում: (1 միավոր)

12. 1897 թ. հուլիսի 25-ին հայ ազատագրական պայքարի շուրջ 300 վրիժառուներ _____-ի, Խանասորի Վարդանի և Հ. Արղությանի (Իշխան) հրամանատարությամբ պատժիչ գործողություններ սկսեցին քրդական մագրիկ ցեղի դեմ: (1 միավոր)

№ 13-14

**Համապատասխանեցում պահանջող առաջադրանքներ՝
յուրաքանչյուրը 4 փաստից**

13. Ծննդյան տարեթիվը համապատասխանեցնել հայ նշանավոր գործչի անվանը:
(1 միավոր)

- 1) Ներսես Ե. Աշտարակեցի
- 2) Թովմա Մեծոփեցի
- 3) Հովհաննես Հերմոնեցի
- 4) Մովսես Գ. Տաթևացի

1	
2	
3	
4	

- ա) 1370 թ.
- բ) 1578 թ.
- գ) 1770 թ.
- դ) 1448 թ.
- ե) 1378 թ.

14. Աշխատության անվանումը համապատասխանեցնել հեղինակի անվանը:
(1 միավոր)

- 1) Ղևոնդ Ալիշան
- 2) Մովսես Կաղանկատվացի
- 3) Մատթեոս Ա. Կոստանդնուպոլսեցի
- 4) Թովմա Մեծոփեցի

1	
2	
3	
4	

- ա) «Աղվանից աշխարհի պատմություն»
- բ) «Բարի մարդ և բարի քրիստոնյա»
- գ) «Ազգապատում»
- դ) «Արշալույս քրիստոնեության հայոց»
- ե) «Հիշատակարան»

№ 15-17

Աշխատանք սկզբնաղբյուրով

15. «Մի բան է իմանալ, թե ինչ է բարին, մի այլ բան՝ բարիք գործելը»:

Ո՞ր ականավոր մտածողն է վերոհիշյալ խոսքերի հեղինակը:

(1 միավոր)

16. «Հայրն իբրև թագավոր և մայրն իբրև թագուհի կառավարում են ընտանիքը: Սույն ընտանեկան պալատի ու թագավորության մեջ ո՛չ ոստիկան կա, ո՛չ սուր, ո՛չ բռնություն, ո՛չ գավազան, այլ այդ բոլորի տեղ հայրական սերն ու մայրական գորովն է»:

Ու՞մ աշխատությունից է մեջբերված հատվածը:

(1 միավոր)

17. « ...ասում էին, թե մարմնի ցանկությունների մեջ էլ չափավոր է եղել, մեծիմաստ և պերճախոս և լի բոլոր հատկություններով, որ պիտանի են մարդուն... չէր նախանձում լավագույններին, չէր արհամարհում նվաստներին, այլ աշխատում էր ընդհանրապես ամենքի վրա տարածել իր խնամքի զգեստը»:

1) Ո՞վ է մեջբերված խոսքերի հեղինակը:

(1 միավոր)

2) Ո՞ւմ է բնութագրել հեղինակը վերը բերված խոսքերով:

(1 միավոր)

№ 18-19

Տերմինների, հասկացությունների, պատճառահետևանքային կապերի, փաստերի իմացություն և խմբավորում պահանջող առաջադրանքներ՝ 2 ճիշտ պատասխանով

18. Տրված բացատրություններից ո՞ր երկուսն են ճիշտ. (1 x 2 = 2 միավոր)

- 1) Բանադրանքը պատժատեսակ է, որը կիրառվում է եկեղեցու և եկեղեցական կարգի դեմ օրինազանց գործունեության կամ անհնազանդության դեպքում:
- 2) Զաղաքական կամ այլ պատճառներով եկեղեցու ներսում ստեղծված ապօրինի կաթողիկոսական աթոռի գահակալը կոչվում է աթոռակից:
- 3) Բոլոր տաղավար տոներին նախորդող շաբաթ օրը կոչվում է Բարեկենդան, իսկ Մեծ պահքին նախորդող շաբաթ օրը կոչվում է Բուն Բարեկենդան:
- 4) Աստվածաշունչ մատյանի և եկեղեցու ուսմունքի վրա հիմնված և եկեղեցական ուսուցման ու բացատրության ամբողջությունը կոչվում է եկեղեցու վարդապետություն:
- 5) «Պոլոժենիե»-ն Չայոց եկեղեցու բարձրագույն խորհրդարանն էր, որը սահմանափակում էր կաթողիկոսի իշխանությունը և իր ժողովական որոշումներով կառավարում էր Չայոց եկեղեցու գործերը:

19. Բերված պնդումներից ո՞ր երկուսն են սխալ. (1 X 2 = 2 միավոր)

- 1) 1243 թ. Սիս քաղաքում Չեթում Առաջին թագավորն ու Կոստանդին Ա. Բարձրբերդի կաթողիկոսը հրավիրում են եկեղեցական ժողով, որի ընդունած կանոնները վերաբերում էին հավատացյալների հոգևոր կյանքի ու կրոնական կենցաղի ճիշտ կազմակերպմանը:
- 2) 1355 թ. Չոմփ պապի կոնդակով Նախիջևանի գավառի Զոնա ավանը դառնում է «Չայ միաբանող եղբայրներ» կաթոլիկ միաբանության եպիսկոպոսական նստավայր:
- 3) 482 թ. բյուզանդական կայսեր հրովարտակով փաստորեն դատապարտվում էր Զաղկեթոնի ընդունած երկաբնակ վարդապետությունը և պաշտպանվում «միավորյալ մեկ բնություն» բանաձևը:
- 4) Բյուզանդիայի Թեոդորա Մամիկոնյան կայսրուհին IX դ. երկրորդ կեսին հուժկու հարված է հասցնում պավլիկյաններին, գրավում և ավերում նրանց մայրաքաղաք Տևրիկը, իսկ պավլիկյաններին գաղթեցնում Թրակիա:
- 5) Ամենայն Չայոց Վազգեն Ա. Կաթողիկոսն իր օրինած վեցերորդ և վերջին՝ «Անկախության մյուռոն»-ով օժեց Ս. Էջմիածնի Մայր տաճարի Ավագ խորանի «Տիրամայրը մանկան հետ» սրբապատկերն ու այն կոչեց «Անկախության Տիրամայր»:

№ 20
Շարադրանք (2 միավոր)

Ներկայացնել քրիստոնեական բարոյագիտության հիմնական հասկացություններից մեկի՝ ողորմաձուլության բովանդակությունը: